ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-976[8]-01.04.2016-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 15-րդ կետում «քրեակատարողական ծառայության պետը և նրա տեղակալները» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության ղեկավարը և նրա տեղակալները» բառերը:

2) 18-րդ կետում «քրեակատարողական ծառայության պետի,» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության ղեկավարի» բառերը, իսկ «քրեակատարողական ծառայության պետը,» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության ղեկավարի տեղակալի համար՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության ղեկավարը,» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում Պրոբացիայի պետական ծառայության ստեղծման պահից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Պրոբացիայի մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ կատարված առաջարկությունների

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**
1	2	3	4
ՀՀ կառավարություն	1. **«Պրոբացիայի մասին» օրենքի նախագծի** (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդված	1. Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1. Սույն օրենքը կարգավորում է պրոբացիայի նպատակները, խնդիրները, սկզբունքները, կազմակերպման և գործունեության հիմունքները, այլընտրանքային խափանման միջոցների, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների, անվտանգության միջոցների, պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջան նշանակելու, պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողության իրականացման և	1. Ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Նախագծերի փաթեթից հանվել են **«Պրոբացիայի պետական ծառայության մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին»,** «**Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Զինծառայողների** և **նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների**

		խորհրդատվական զեկույցի տրամադրման կարգի, ինչպես նաև պրոբացիայի անչափահաս շահառուների նկատմամբ իրականացվող պրոբացիայի առանձնահատկությունների, ինչպես նաև պրոբացիայի պետական ծառայության (այսուհետ՝ Պրոբացիայի ծառայության) գործունեության հետ կապված հարաբերությունները:»: Առաջարկվում է նախագծով կարգավորել նաև Պրոբացիայի պետական ծառայության գործունեության հետ կապված հարաբերությունները՝ պրոբացիայի ծառայողներին դասելով քաղաքացիական ծառայողների շարքին: *Արդյունքում նախագծերի փաթեթից անհրաժեշտ է հանել այն նախագծերը, որոնք առնչվում են պրոբացիայի ծառայողներին զինծառայողներին հավասարեցված անձանց շարքին դասելու հետ:*	**նախագծերը,** իսկ «Պրոբացիայի պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի որոշ առանձնահատկություններ կարգավորվել են «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով՝ առանձին գլխով:
	2. Նախագիծ	2. Լրացնել հաշտարարության ոլորտում պրոբացիայի ծառայության գործառույթներին առնչվող նոր գլուխ:	2. Ընդունվել է. Նախագիծը լրացվել է նոր՝ 8-րդ գլխով (29-ից 34-րդ հոդվածներ), իսկ մյուս գլուխները վերահամարակալվել են: Միաժամանակ Նախագծի համապատասխան հոդվածներում կատարվել են լրացումներ և փոփոխություններ:

	3. Նախագիծ	3. Նախագծի ողջ տեքստում «պրոբացիայի ծառայության շահառու» հասկացությունը իր բոլոր հոլովաձևերով փոխարինել «պրոբացիայի շահառու» հասկացությամբ:	3. Ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	4. Նախագիծի 2-րդ հոդված	4. Լրացնել «սահմանադրական օրենքներ» բառերը, քանի որ պրոբացիայի հետ կապված որոշ հարաբերություններ կարգավորվելու են սահմանադրական օրենքներով, ինչպես նաև «քրեակատարողական օրենսգրքով,» բառերից հետո լրացնել «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը:	4. Ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան լրացումներ:
	5. Նախագիծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ	5. Սահմանել «պրոբացիայի ծառայող» հասկացությունը:	5. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
	6. Նախագիծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ	6. Հստակեցնել «խորհրդատվական զեկույցի» հասկացությունը:	6. Ընդունվել է. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը շարադրվել է նոր խմբագրությամբ (համարակալվել է որպես 9-րդ կետ):
	7. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ	7. Հստակեցնել «վերահսկողության պլան» հասկացությունը:	7. Ընդունվել է. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը շարադրվել է նոր խմբագրությամբ (համարակալվել է որպես 11-րդ կետ):
	8. Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ	8. Պրոբացիայի խնդիրներում հստակեցնել վերահսկողության իրականացման դեպքերը:	8. Ընդունվել է. Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը շարադրվել է նոր խմբագրությամբ:

	9. Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մաս	9. Հստակեցնել պրոբացիայի ծառայության հետ համագործակցող մարմինների և կազմակերպությունների շրջանակը:	9. Ընդունվել է. Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասում «հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև այլ մարմինների և կազմակերպությունների» բառերը փոխարինվել են «հասարակական և այլ կազմակերպությունների» բառերով:
	10. Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մաս	10. Կիրառվող հասկացությունների միասնականությունն ապահովելու նպատակով «օժանդակում» բառը փոխարինել «աջակցում» բառով:	10. Ընդունվել է. Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	11. Նախագծի 12-րդ հոդված	11. Հստակեցնել «պրոբացիայի ծառայության տարածքային մարմին», «իրավասու մարմին» և «մարմին» հասկացությունները:	11. Ընդունվել է. Նախագծի ամբողջ տեքստում օգտագործվում են «պրոբացիայի ծառայության տարածքային մարմին» (այսուհետ՝ տարածքային մարմին) հասկացությունը, ինչպես նաև «դատարանի կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի (սույն գլխում այսուհետ՝ իրավասու մարմին)» հասկացությունները:
	12. Նախագծի 12-րդ հոդվածի 3-րդ մաս	12. Սահմանել ժամկետ՝ պրոբացիայի ծառայողի կողմից պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը պարզելու, նրա հետ կապ է հաստատելու, է տարածքային մարմին ներկայանալու վերաբերյալ նրան պատշաճ ծանուցելու հետ կապված:	12. Ընդունվել է. Նախագծի 12-րդ հոդվածի 3-րդ մասում որպես ժամկետ սահմանվել է իրավասու մարմնի որոշումը ստանալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Համանման լրացում կատարվել է նաև նախագծի 16-րդ հոդվածի 3-րդ մասում, 23-րդ հոդվածի 3-րդ մասում և 24-րդ հոդվածի 4-րդ մասում:
	13. Նախագծի 12-րդ հոդված	13. Նախատեսել դրույթներ՝ պրոբացիայի շահառուի կողմից տարածքային բաժին չներկայանալու կամ պրոբացիայի ծառայողի կողմից	13. Ընդունվել է. Նախագծի 12-րդ հոդվածը լրացվել է նոր՝ 4-րդ կետով, որի համաձայն՝ պրոբացիայի շահառուի՝ տարածքային մարմին չներկայանալու դեպքում պրոբացիայի ծառայողը

		պրոբացիայի շահառուին չհայտնաբերելու հետ կապված:	պարտավոր է այցելել նրա բնակության կամ աշխատանքի վայր՝ պարզելու չներկայանալու պատճառները, ինչի մասին կազմում է արձանագրություն: Բացի այդ նույն հոդվածի 4-րդ մասը դարձել է 5-րդ մաս և շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ պրոբացիայի շահառուին չհայտնաբերելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում իրավասու մարմին: Համանման կարգավորում է նախատեսվել նաև նախագծի 16-րդ, 23-րդ և 24-րդ հոդվածներում:
	14. Նախագծի 12-րդ հոդվածի 5-րդ մաս	14. Հստակեցնել վերահսկողության պլանում ներառվող տեղեկությունների շրջանակը:	14. Ընդունվել է Նախագծի 12-րդ հոդվածի 5-րդ մասը դարձել է 6-րդ մաս և շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ այլընտրանքային խափանման միջոց կիրառած իրավասու մարմնի որոշման հիման վրա և դրա շրջանակներում, ինչպես նաև պրոբացիայի շահառուի վերաբերյալ ռիսկերի և պահանջմունքների գնահատման հիման վրա պրոբացիայի ծառայողը վերահսկողության պլանում սահմանում է պրոբացիայի շահառուի վերահսկողության ենթակա գործողությունները և դրանց կատարման ժամկետները, իրավունքներն ու պարտականությունները, դրանք խախտելու համար օրենքով սահմանված պատասխանատվությունը: Համանման

			փոփոխություն կատարվել է նաև նախագծի 16-րդ և 24-րդ հոդվածներում:
	15. Նախագծի 12-րդ հոդված	15. Նախատեսել երաշխիք՝ պրոբացիայի ծառայողի կողմից պրոբացիայի շահառուի բնակության, աշխատանքի կամ այն վայրեր ազատ մուտք ու ելք իրականացնելու համար, որտեղ իրավասու մարմնի որոշմամբ պրոբացիայի շահառուին արգելված է այցելել:	15. Ընդունվել է. Նախագիծը լրացվել է նոր 8-րդ կետով, որի համաձայն՝ պրոբացիայի ծառայողի ծառայողական վկայականի ներկայացման դեպքում պրոբացիայի շահառուի բնակության վայրի անվտանգությունը կամ կառավարումն իրականացնող մարմինները, կազմակերպությունները, պրոբացիայի շահառուի աշխատավայրի վարչակազմը, ինչպես նաև այն վայրերի վարչակազմերը, որտեղ իրավասու մարմնի որոշմամբ պրոբացիայի շահառուին արգելված է այցելել, պարտավոր են ապահովել պրոբացիայի ծառայողի ազատ մուտքն ու ելքը նշված վայրեր: Համանման կարգավորում նախատեսվել է նաև Նախագծի 24-րդ հոդվածում:
	16. Նախագծի 12-րդ հոդվածի 7-րդ մաս	16. Նախատեսել ժամկետ պրոբացիայի ծառայողի կողմից կազմված արձանագրությունը դատարան ներկայացնելու համար:	16. Ընդունվել է. Նախագծի 12-րդ հոդվածի 7-րդ մասի (վերահամարակալվել է՝ 9-րդ մաս) 2-րդ նախադասությունում «կազմում է արձանագրություն» բառերից հետո ավելացվել են «և ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում» բառերը: Համանման լրացում կատարվել է նաև նախագծի 16-րդ և 24-րդ հոդվածներում:
	17. Նախագծի 12-րդ հոդված	17. Նշյալ հոդվածի 12-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Պրոբացիայի շահառուի կողմից իրավասու մարմնի որոշման հիման	17. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն և լրացվել է նոր՝ 13-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝ այլընտրանքային խափանման միջոցի

		վրա կիրառվող այլընտրանքային խափանման միջոցի պայմանների խախտման դեպքում տարածքային մարմինը, ներքին կանոնակարգի համաձայն, միջոցներ է ձեռնարկում պրոբացիայի շահառուին հայտնաբերելու և իրավասու մարմնի որոշման հիման վրա կիրառվող սահմանափակումների կատարումն ապահովելու ուղղությամբ, անհապաղ հայտնում է քրեական վարույթն իրականացնող մարմնին, անհրաժեշտության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը (այսուհետ՝ ՀՀ ոստիկանություն) կամ այլ համապատասխան մարմիններին և իր իրավասությունների սահմաններում աջակցում նրանց:»: Միաժամանակ նախատեսել դրույթ՝ այլընտրանքային խափանման միջոցի կիրառման ավարտից կամ դադարեցվելուց հետո տարածքային մարմնի գործողությունների հետ կապված:	կիրառման ավարտից կամ դադարեցվելուց հետո տարածքային մարմինը պրոբացիայի շահառուին տալիս է տեղեկանք այլընտրանքային խափանման միջոցի կիրառման ավարտի կամ դադարեցման մասին, և այդ մասին հայտնում է իրավասու մարմնին, ՀՀ ոստիկանություն, իսկ անձնական գործն արխիվացվում է: Համանման դրույթ նախատեսվել է նաև նախագծի 16-րդ հոդվածում:
	18. Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մաս	18. Հստակեցնել, թե ինչ ժամկետներում է պրոբացիայի	18. Ընդունվել է. Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մասում «անհապաղ» բառից հետո ավելացվել է

		ծառայողը գրանցում պրոբացիայի շահառուին:	«, բայց ոչ ուշ քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում» բառերը:
	19. Նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ մաս	19. «քրեակատարողական օրենսգրքով» բառերից հետո լրացնել «և դրա հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից պրոբացիայի ծառայության ներքին կանոնակարգով» բառերը:	19. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
	20. Նախագծի 16-րդ հոդվածի 4-րդ մաս	20. Հստակեցնել պրոբացիայի շահառուի կողմից կրկին անգամ տարածքային մարմին չներկայանալու հետ կապված հարաբերությունները:	20. Ընդունվել է. Նախագծի 16-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ սույն մասով նախատեսված արարքը՝ վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում տարածքային մարմինն այդ մասին կազմում է արձանագրություն և անվտանգության միջոցի տեսակը փոխելու միջնորդություն է ներկայացնում դատարան: Համանման կարգավորում է նախատեսվել նաև Նախագծի 24-րդ հոդվածում:
	21. Նախագծի 16-րդ հոդված	21. Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ մաս՝ «Պրոբացիայի շահառուին չհայտնաբերելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և ոչ ուշ քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում իրավասու մարմին:»:	21. Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:

	22. Նախագծի 16-րդ հոդվածի 13-րդ մաս	22. Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «13. Պրոբացիայի շահառուի կողմից դատական ակտի հիման վրա կիրառվող սահմանափակումների խախտման դեպքում տարածքային մարմինը, ներքին կանոնակարգին համաձայն, միջոցներ է ձեռնարկում դատական ակտի հիման վրա կիրառվող սահմանափակումների կատարումն ապահովելու ուղղությամբ, խախտման մասին անհապաղ հայտնում է քրեական վարույթն իրականացնող մարմնին, անհրաժեշտության դեպքում՝ ՀՀ ոստիկանությանը կամ այլ համապատասխան մարմիններին և իր իրավասությունների սահմաններում աջակցում նրանց, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում և կարգով միջնորդություն ներկայացնում դատարան անվտանգության միջոցը փոխելու վերաբերյալ:»:	22. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Համապատասն փոփոխություն կատարել նաև 24-րդ հոդվածի 19-րդ մասում (նշյալ դրույթը համարակալվել է որպես 20-րդ մաս):
	23. Նախագծի 17-րդ հոդված	23. Հստակեցնել պրոբացիայի շահառուի կողմից իր վրա դրված պարտականությունների կատարումից հրաժարվելու, խուսափելու կամ խախտելու դեպքում պրոբացիայի ծառայողի կողմից արձանագրություն կազմելու և համապատասխան մարմին	23. Ընդունվել է. Նախագծի 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «հրաժարվելու կամ խուսափելու» և «խախտելու» բառերից հետո լրացվել են «դեպքի ի հայտ գալու պահից եռօրյա ժամկետում» բառերը: Համանման լրացումներ են կատարվել նաև նախագծի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում, 19-րդ հոդվածի 6-րդ

		ներկայացնելու ժամկետը:	մասում, 20-րդ հոդվածի 6-րդ մասում, 22-րդ հոդվածի 3-րդ մասում, 25-րդ հոդվածում, 26-րդ հոդվածում և 27-րդ հոդվածի 8-րդ մասում:
	24. Նախագիծ	24. Նախագծի ողջ տեքստում «թունավոր կամ այլ թմրեցնող» բառերը փոխարինել «խիստ ներգործող կամ թունավոր» բառերով:	24. Ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	25. Նախագծի 19-րդ հոդված	25. Նախատեսել, որ պրոբացիայի շահառուի կողմից ոգելից խմիչքների (ալկոհոլի), թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն), թունավոր կամ այլ թմրեցնող նյութերի հետ առնչության մասին հիմնավոր կասկածի առկայության դեպքում պրոբացիայի շահառուի օրգանիզմում ոգելից խմիչքների (ալկոհոլի), թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն), թունավոր կամ այլ թմրեցնող նյութերի առկայության վերաբերյալ հետազոտություն անցնելը պարտադիր է: Բացի այդ նախատեսել պատասխանատվություն՝ նշված հետազոտությունն անցնելուց խուսափելու կամ հրաժարվելու համար:	25. Ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Համանման փոփոխություններ են կատարվել նաև նախագծի 20-րդ և 24-րդ հոդվածներում:
	26. Նախագծի 23-րդ հոդված	26. Նշյալ հոդվածից հանել պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ խորհրդատվական զեկույցներին առնչվող կարգավորումները:	26. Ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

	27. Նախագծի 23-րդ հոդվածի 2-րդ մաս	27. Հստակեցնել այն դեպքերը, երբ պրոբացիայի ծառայության կողմից խորհրդատվական զեկույցը ներկայացվում է դատարան և այն դեպքերը, երբ խորհրդատվական զեկույցը ներկայացվում է անկախ հանձնաժողովին:	27. Ընդունվել է. Նախագծի 23-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ Դատարանի պահանջի հիման վրա տարածքային մարմինը դատվածությունը հանելու վերաբերյալ ներկայացնում է խորհրդատվական զեկույց: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի կամ դատարանի պահանջի հիման վրա տարածքային մարմինը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատիժը ավելի մեղմ պատժով փոխարինելու վերաբերյալ ներկայացնում է խորհրդատվական զեկույց:
	28. Նախագծի 23-րդ հոդված	28. Նախատեսել ժամկետներ պրոբացիայի ծառայողի կողմից պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը պարզելու, ինչպես նաև նրան չհայտնաբերելու դեպքում իրավասու մարմնին տեղյակ պահելու առնչությամբ:	28. Ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան լրացումներ:
	29. Նախագծի 23-րդ հոդվածի 7-րդ մաս	29. Հստակեցնել «և աշխատանքային գործունեության վերաբերյալ այլ տվյալներ» հասկացությունը:	29. Ընդունվել է. Նախագծի 23-րդ հոդվածի 7-րդ մասում «եւ աշխատանքային գործունեության վերաբերյալ այլ տվյալներ» բառերը փոխարինվել են «զբաղմունքի տեսակը» բառերով:
	30. Նախագծի 23-րդ հոդվածի 7-րդ մաս	30. Առավել նպատակահարմար է «խնամարկյալների» բառը փոխարինել	30. Ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		«խնամքի տակ գտնվող անձանց» բառերով:	
	31. Նախագծի 23-րդ հոդվածի 8-րդ մաս	31. Նախատեսել, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը սահմանելու է միայն խորհրդատվական զեկույցի կազմման կարգը:	31. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	32. Նախագծի 24-րդ հոդված	32. Հստակեցնել պրոբացիայի ծառայության կողմից վերահսկողության իրականացման դեպքերը:	32. Ընդունվել է. Նախագծի 24-րդ հոդվածում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	33. Նախագծի 24-րդ հոդվածի 6-րդ մաս	33. Հստակեցնել վերահսկողության պլանի բովանդակությունը:	33. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
	34. Նախագծի 24-րդ հոդվածի 12-րդ մաս	34. Որպես վերահսկողություն իրականացնող մարմին նախատեսել նաև այն կազմակերպությունը, որտեղ պրոբացիայի շահառուն այլընտրանքային ծառայություն է անցնում:	34. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
	35. Նախագծի 24-րդ հոդվածի 20-րդ մաս	35. Քանի որ ոչ բոլոր դեպքերում է պրոբացիայի շահառուի նկատմամբ նշանակվում փորձաշրջան, ապա առավել նպատակահարմար է փորձաշրջանից հետո ավելացնել նաև «վերահսկողություն» բառը:	35. Ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան լրացումներ (վերահամարակալվել է որպես 21-րդ մաս):
	36. Նախագծի 24-րդ հոդված	36. Նախագծի միասնականությունն ապահովելու նպատակով 24-րդ հոդվածի վերջում նախատեսել մեկ միասնական դրույթ՝	36. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:

		արձանագրությունների և այլ փաստաթղթերի սահմանման հետ կապված:	
	37. Նախագծի 27-րդ հոդվածի 1-ին մաս	37. Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1. Հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատժի կրումը հետաձգելու մասին դատական ակտը ստանալուպահից անհապաղ, բայց ոչ ուշ քան եռօրյա ժամկետում պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելու մասին տեղեկացնում է նրա բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ երեխայի դաստիարակության և խնամքի նկատմամբ հսկողության ապահովման նպատակով:»:	37. Ընդունվել է. Նախագծում կատարավել է համապատասխան փոփոխություն:
	38. Նախագծի 27-րդ հոդվածի 3-րդ մաս	38. Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «3. Եթե հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող պրոբացիայի շահառուն խուսափում է երեխայի դաստիարակությունից և խնամքից, ապա պրոբացիայի ծառայողը համապատասխան խախտումը հայտնաբերելու պահից անհապաղ, բայց ոչ ուշ քան եռօրյա ժամկետում պրոբացիայի շահառուին գրավոր	38. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

		նախազգուշացնում է պատժի կրման հետաձգումը վերացնելու հնարավորության մասին: Պրոբացիայի շահառուն երեխայի դաստիարակությունից և խնամքից խուսափող է համարվում, եթե, պաշտոնապես չհրաժարվելով երեխայից, նրան թողնում է ծննդատանը կամ հանձնում է մանկատուն կամ հակաբարոյական ապրելակերպ է վարում և չի զբաղվում երեխայի դաստիարակությամբ ու խնամքով կամ մեկ ամսից ավելի ժամկետով երեխային թողնում է ազգականների կամ այլ անձանց մոտ և անձամբ չի զբաղվում նրա դաստիարակությամբ կամ կատարում է այլ գործողություններ, որոնք վկայում են երեխային դաստիարակելուց խուսափելու մասին:»:	
	39. Նախագծի 27-րդ հոդված	39. Հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով՝ վերահսկողության ընթացքում, հաշվի առնելով պրոբացիայի շահառուի վարքագիծը, կատարած հանցանքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, երեխայի դաստիարակության նկատմամբ վերաբերմունքը և պատժի	39. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան լրացում (նախատեսվել է նոր՝ 6-րդ մաս):

		չկրած ժամկետը, պրոբացիայի ծառայողը պատժի չկրած մասից պրոբացիայի շահառուին ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու միջնորդություն է ներկայացնում դատարան:	
	40. Նախագծի 28-րդ հոդված	40. Հստակեցնել վերասոցիալականացման հետ կապված պրոբացիայի ծառայության գործառույթները:	40. Ընդունվել է. Նախագծի 28-րդ հոդվածի 3-րդ մասը (վերահամարակալվել է 2-րդ մաս) շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ պրոբացիայի ծառայության կողմից իրականացվող վերասոցիալականացման միջոցառումների նպատակը սոցիալական վերականգնման կարճաժամկետ կամ երկարաժամկետ աշխատանքների և ուսումնական ծրագրերի նախաձեռնումն ու իրականացումն է, ինչպես նաև ոգելից խմիչքներ (ալկոհոլ), թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր գործածելու դեմ պայքարի ոլորտում հատուկ ծրագրերի իրականացումը:
	41. Նախագծի 28-րդ հոդված	41. Անմեղության կանխավարկածի սկզբունքը չխախտելու համար առավել նպատակահարմար է մինչդատական փուլում վերասոցիալականացման միջոցառումներ իրականացնել միայն անձի համաձայնությամբ:	41. Ընդունվել է. Նախագծի 28-րդ հոդվածում ավելացվել է նոր 4-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝ քրեական վայրույթի մինչդատական փուլում պրոբացիայի շահառուի նկատմամբ վերասոցիալականացման միջոցառումները կարող են իրականացվել միայն նրա համաձայնության դեպքում:

	42.Նախագծի 28-րդ հոդված	42. Կարգավորված չէ այն հարցը, թե ով է սահմանում վերասոցիալականացման միջոցառումների մշակման կարգը:	42. Ընդունվել է. Նախագծի 28-րդ հոդվածում ավելացվել է նոր 5-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝ վերասոցիալականացման միջոցառումների մշակման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
	43. Նախագիծ	43. Լրացնել հաշտարարության ոլորտում պրոբացիայի ծառայության գործառույթներին առնչվող նոր գլուխ:	43. Ընդունվել է. Նախագիծը լրացվել է նոր՝ 8-րդ գլխով (29-ից 34-րդ հոդվածներ), իսկ մյուս գլուխները վերահամարակալվել են: Միաժամանակ Նախագծի համապատասխան հոդվածներում կատարվել են լրացումներ և փոփոխություններ:
	44. Նախագծի 29-րդ հոդված	44. Հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.՝ **«Հոդված 29. Ծանուցման եղանակները** 1. Տարածքային մարմինը պարտավոր է օրենքով սահմանված դեպքերում և կարգով պատշաճ ծանուցել պրոբացիայի շահառուին: 2. Պրոբացիայի շահառուի ծանուցումը կատարվում է՝ 1) թղթային կամ էլեկտրոնային ծանուցագրով. 2) ծանուցվողի գրավոր համաձայնությամբ՝ ցանկացած այլ եղանակով: 3. Եթե առկա են հավաստի տվյալներ, որ պրոբացիայի շահառուն	44. Ընդունվել է. Նախագծի 29-րդ հոդվածում կատարվել են համապատասխան փոփոխություններ: (հոդվածը վերահամարակալվել է որպես 36-րդ հոդված):

		ֆիզիկապես անկարող է կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող ներկայանալ տարածքային մարմին, պրոբացիայի ծառայողն անձամբ այցելում է պրոբացիայի շահառուին կամ ապահովում է նրա՝ տարածքային մարմին ներկայանալը:»:	
	45. Նախագծի 30-րդ հոդված	45. Նախագծի միասնականությունը ապահովելու նպատակով նախատեսել, որ ծանուցագրով պրոբացիայի շահառուին բացի տարածքային մարմին ներկայանալու հրավերից կարող է փոխանցվել նաև այլ տեղեկատվություն:	45. Ընդունվել է. Նախագծի 30-րդ հոդվածում (վերահամարակալվել է որպես 35-րդ հոդված) կատարվել են համապատասխան լրացումներ: Համապատասխան փոփոխություն կատարվել է նաև Նախագծի 38-րդ հոդվածի 2-րդ մասում:
	46. Նախագծի 31-րդ հոդված	46. Հոդվածի 1-ին մասում հստակեցնել թղթային ծանուցագրի հանձնման վայրի հետ կապված դրույթները:	46. Ընդունվել է. Նախագծի 31-րդ հոդվածի (համարակալվել է որպես 37-րդ հոդված) 1-ին մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Թղթային ծանուցագիրը հանձնվում է անմիջականորեն՝ ծանուցվող անձի նշած հասցեով: Եթե անձն առաջին անգամ է ծանուցվում, ապա թղթային ծանուցագիրը հանձնվում է նրա մշտական կամ փաստացի բնակության կամ գտնվելու վայրի և հաշվառման հասցեով, իսկ եթե այն հայտնի չէ, ապա աշխատանքի, ուսման կամ ծառայության վայրի հասցեով:»:
	47. Նախագծի 31-րդ հոդվածի 2-րդ մաս	47. Առավել նպատակահարմար է ծանուցագիրը հանձնել պրոբացիայի	47. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն

		շահառուի աշխատանքի, ուսման կամ ծառայության վայր վարչակազմի ղեկավարին:	(համարակալվել է որպես 37-րդ հոդված):
	48. Նախագծի 31-րդ հոդվածի 5-րդ մաս	48. Նախատեսել պրոբացիայի շահառուի կողմից՝ իրեն հարմար ցանկացած էլեկտրոնային փոստի հասցե տրամադրելու հնարավորություն:	48. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան լրացում (համարակալվել է որպես 37-րդ հոդված): Համապատասխան լրացում կատարվել է նաև նախագծի 38-րդ հոդվածում:
	49. Նախագծի 32-րդ հոդված	49. Նախատեսել դրույթ՝ հարգելի պատճառներով ծանուցագիր ստանալուց հետո տարածքային մարմին չներկայանալու կամ ծանուցագրում նշված գործողությունները չկատարելու համար:	49. Ընդունվել է. Նախագծի 32-րդ հոդվածում (համարակալվել է որպես 38-րդ հոդված) նախատեսվել է նոր 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Պրոբացիայի շահառուի կողմից պրոբացիայի ծառայություն ծանուցագիր ստանալուց հետո չներկայանալը կամ ծանուցագրում նշված գործողությունները չկատարելը կարող է համարվել հարգելի, եթե առկա է սույն օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկը:»:
	50. Նախագծի 33-րդ հոդվածի 1-ին մաս	50. Պրոբացիայի շահառուի անձնական գործի մեջ ներառել նաև վերասոցիալականացման միջոցառումներին վերաբերող տեղեկությունները:	50. Ընդունվել է. Նախագծի 33-րդ հոդվածի 1-ին մասում կատարվել է համապատասխան լրացում (համարակալվել է որպես 39-րդ հոդված):
	51. Նախագծի 34-րդ հոդված	51. Նախատեսել սահմանափակում՝ բանկային և այլ գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով հարցումներ ուղարկելու առումով:	51. Ընդունվել է. Նախագծի 34-րդ հոդվածի (համարակալվել է որպես 40-րդ հոդված) 3-րդ մասում ավելացվել է նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Պրոբացիայի ծառայությունը պրոբացիայի շահառուի վերաբերյալ ֆինանսական

			կազմակերպություններին և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին բանկային և այլ գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով հարցումներ չի կատարում:»:
	52. Նախագծի 35-րդ հոդված	52. Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ մաս՝ «6. Պրոբացիայի ծառայության տվյալների շտեմարանի մեջ ներառվող տեղեկությունների հավաքագրման և օգտագործման ընթացակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:	52. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
	53. Նախագծի 35-րդ հոդվածի 1-ին մաս	53. Նախատեսված չէ էլեկտրոնային հսկողության կիրառումը հետպատժյա փուլում:	53. Ընդունվել է. Նախագծի 35-րդ հոդվածի (համարակալվել է որպես 41-րդ հոդված) 1-ին մասում կատարվել է համապատասխան լրացում:
	54. Նախագծի 39-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	54. Առավել նպատակահարմար է օգտագործել «պատժի և հարկադրանքի այլ միջոցների կատարում» հասկացությունը:	54. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատսխան փոփոխություն: Համապատասխան փոփոխություն կատարվել է նաև նախագծի 51-րդ հոդվածի 1-ին մասում:
	55. Նախագծի 39-րդ հոդված	55. Նախագծի միասնականությունն ապահովելու նպատակով որպես պրոբացիայի շահառուի իրավունք նախատեսել վերասոցիալականացման միջոցառումներին մասնակցելը:	55. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատսխան լրացում:
	56. Նախագծի 40-րդ հոդված	56. 1-ին մասի 1-ին, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերը շարադրել հետևյալ	56. Ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ

		խմբագրությամբ. «1) կատարել դատական ակտով կամ օրենքով սահմանված կարգով իրավասու մարմնի որոշմամբ սահմանված պարտականությունները. (…) 5) խնամքով վերաբերվել իրեն ամրակցված գույքին, այդ թվում՝ էլեկտրոնային հսկողության միջոցին. 6) սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում պրոբացիայի ծառայողին տրամադրել հավաստի տեղեկություններ. 7) օրենքով սահմանված դեպքերում և կարգով մասնակցել վերասոցիալականացման միջոցառումներին:»:	(համարակալվել է որպես 46-րդ հոդված):
	57. Նախագծի 42-րդ հոդված	57. 1-ին մասը հանել, քանի որ համապատասխան դրույթներն արդեն իսկ առկա են նախագծի այլ հոդվածներում:	57. Ընդունվել է. Նախագծի 42-րդ հոդվածի 1-ին մասը հանվել է (համարակալվել է որպես 47-րդ հոդված):
	58. Նախագծի 42-րդ հոդվածի 3-րդ մաս	58. Հստակեցնել, թե ինչ եղանակով է պրոբացիայի շահառուն տեղեկացնելու պրոբացիայի ծառայողին պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կարգն ու պայմանները չպահպանելու կամ կարգն ու պայմանները չպահպանելու	58. Ընդունվել է. Նախագծի 42-րդ հոդվածի (համարակալվել է որպես 48-րդ հոդված) 2-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքերի առկայության դեպքում պրոբացիայի շահառուն պարտավոր է դրանց մասին գրավոր, իսկ

		հարգելի պատճառներից որևէ մեկի առկայության մասին:	անհնարինության դեպքում բանավոր տեղեկացնել պրոբացիայի ծառայողին՝ համապատասխան թույլտվություն ստանալու նպատակով:»:
	59. Նախագծի 42-րդ հոդվածի 4-րդ մաս	59. Հստակեցնել պրոբացիայի ծառայողի կողմից պրոբացիայի շահառուի դիմումը ստանալու հետո կատարվող գործողությունների ժամկետները:	59. Ընդունվել է. Նախագծի 42-րդ հոդվածի 4-րդ մասը (համարակալվել է որպես 48-րդ հոդվածի 3-րդ մաս) շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուի դիմումը ստանալու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշում է ընդունում ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կարգն ու պայմանները չպահպանելու թույլատվություն տալու կամ մերժելու մասին, իսկ այլընտրանքային խափանման միջոցի դեպքում՝ գրավոր միջնորդություն է ներկայացնում վարույթն իրականացնող մարմին:»:
	60. Նախագծի 43-րդ հոդվածի 4-րդ մաս	60. «Այլընտրանքային խափանման միջոցների կամ անվտանգության միջոցների կամ պատժի կատարման» բառերը փոխարինել «պատժի և հարկադրանքի այլ միջոցների կատարման» բառերով:	60. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: (վերահամարակալվել է 5-րդ մաս)
	61. Նախագծի 43-րդ հոդվածի 5-րդ մաս	61. 1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) պրոբացիայի անչափահաս շահառուի հետ հանդիպմանը	61. Ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ (համարակալվել է որպես 49-րդ հոդված):

		ապահովել հոգեբանի, պրոբացիայի անչափահաս շահառուի օրինական ներկայացուցչի կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի մասնակցությունը. 2) դիմել համապատասխան խնամակալության և հոգաբարձության մարմին՝ պրոբացիայի անչափահաս շահառուի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար.»:	
	62. Նախագիծ	62. Լրացնել նոր՝ 15-րդ գլուխ «Պրոբացիայի ծառայությունը» վերտառությամբ: Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 52-րդ, 53-րդ, 54-րդ, 55-րդ, 56-րդ, 57-րդ, 58-րդ և 59-րդ հոդվածներ՝ «**Հոդված 52. Պրոբացիայի ծառայությունը** 1. Պրոբացիայի ծառայությունը գործում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում՝ որպես առանձնացված ստորաբաժանում: 2. Պրոբացիայի ծառայությունը կազմված է կենտրոնական և տարածքային մարմիններից: Պրոբացիայի ծառայողները քաղաքացիական ծառայողներ են:	62. Ընդունվել է. Նախագիծը լրացվել է նոր՝ 15-րդ գլխով՝ առաջարկվող խմբագրությանը համապատասխան:

		3. Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմինը բաղկացած է բաժիններից, որոնց կազմում կարող են գործել բաժանմունքներ: 4. Պրոբացիայի ծառայության տարածքային մարմիններն են պրոբացիայի ծառայության մարզային (Երևանի քաղաքային) մարմինները, որոնց կազմում կարող են գործել բաժիններ: 5. Պրոբացիայի ծառայության կանոնադրությունը, կառուցվածքը և Պրոբացիայի ծառայության ներքին կանոնակարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ: 6. Պրոբացիայի ծառայությունում ծառայությունն իրականացվում է օրինականության, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության ու հրապարակայնության սկզբունքների պահպանմամբ՝ միանձնյա ու կենտրոնացված ղեկավարման	

		միջոցով: 7. Պրոբացիայի ծառայության կենտրոնական և տարածքային մարմիններն ունեն Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իրենց հայերեն անվանմամբ կլոր կնիք, միասնական նմուշի ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ: Պրոբացիայի ծառայողները կարող են կրել համազգեստ: 8. Պրոբացիայի ծառայության կենտրոնական և տարածքային մարմինների կողմից օգտագործվող կնիքի, միասնական նմուշի ձևաթղթերի, խորհրդանիշի, անհատականացման այլ միջոցների, համազգեստի և կրծքանշանի նկարագիրը, ինչպես նաև համազգեստի և կրծքանշանի կրելու կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը: **Հոդված 53. Պրոբացիայի ծառայության լիազորությունները** 1. Պրոբացիայի ծառայությունը. 1) ապահովում է Հայաստանի Հանրապետության	

		քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների կատարումը. 2) ապահովում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված անվտանգության միջոցների կատարումը. 3) ապահովում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումը. 4) տրամադրում է պրոբացիայի շահառուի վերաբերյալ խորհրդատվական զեկույցներ, ներկայացնում հաշվետվություններ և միջնորդություններ. 5) վերահսկողություն է իրականացնում պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ. 6) իրականացնում է հաշտարարություն.	

		7) իրականացնում է վերասոցիալականացման միջոցառումներ. 8) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ: 2. Պրոբացիայի ծառայությունում կարող են իրականացվել կրիմինոլոգիական հետազոտություններ՝ պրոբացիայի շահառուների նկատմամբ կիրառվող վերասոցիալականացման, հանցագործությունների կանխման և վերականգնողական միջոցառումների գիտական ուսումնասիրության նպատակով: 3. Պրոբացիայի ծառայության ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին: **Հոդված 54. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության լիազորությունները պրոբացիայի ծառայության կազմակերպման գործում** 1. Հայաստանի	

		Հանրապետության արդարադատության նախարարությունը կազմակերպում, ղեկավարում և վերահսկողություն է իրականացնում պրոբացիայի ծառայության գործունեության նկատմամբ: 2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը՝ 1) կազմակերպում է և ընդհանուր վերահսկողություն իրականացնում պրոբացիայի ծառայության գործունեության նկատմամբ. 2) արձակում է պրոբացիայի ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված հրամաններ և տալիս է ցուցումներ. 3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարում է նշանակումներ, կիրառում է կարգապահական և խրախուսանքի միջոցներ. 4) քննում է պրոբացիայի ծառայողների նկատմամբ բերված բողոքները, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով և իր	

		լիազորությունների սահմաններում կասեցնում, վերացնում, անվավեր, չեղյալ կամ ուժը կորցրած է ճանաչում պրոբացիայի ծառայության պաշտոնատար անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող հրամանները, որոշումներն ու ցուցումները. 5) սահմանում է պրոբացիայի ծառայության կողմից հաշվետվություններ ներկայացնելու կարգը և ժամկետները. 6) հաստատում է պրոբացիայի ծառայողի այցելության արդյունքում, պրոբացիայի ծառայողին իրավասու մարմնի որոշմամբ սահմանված վայր մուտքը և ելքը արգելելու, պրոբացիայի ծառայողի պարտականությունների կատարմանը ցանկացած ձևով խոչընդոտելու դեպքում կազմվող արձանագրությունների ձևերը. 7) հաստատում է իրավասու մարմնի որոշմամբ սահմանված կոնկրետ սահմանափակումների վերաբերյալ կազմվող հաշվետվությունների և արձանագրությունների ձևերը.	

		8) սահմանում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժը ավելի մեղմ պատժով փոխարինելու, դատվածությունը հանելու վերաբերյալ խորհրդատվական զեկույցը կազմելու և տրամադրելու կարգը. 9) հաստատում է կամավորի հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձևը և պայմանները. 10) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ: **Հոդված 55. Պրոբացիայի ծառայության ղեկավարը** 1. Պրոբացիայի ծառայությունը ղեկավարում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության ղեկավարը: 2. Պրոբացիայի ծառայության ղեկավարը. 1) ապահովում է պրոբացիայի ծառայության բնականոն գործունեությունը. 2) ապահովում է «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, սույն օրենքի, Հայաստանի	

		Հանրապետության այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանների և ցուցումների կատարումը. 3) իր իրավասության շրջանակներում ընդունում է հրամաններ, որոշումներ, տալիս է ցուցումներ. 4) իրեն վերապահված լիազորությունների սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս պրոբացիայի ծառայության անունից, ներկայացնում նրա շահերը, տալիս է լիազորագրեր պրոբացիայի ծառայության անունից հանդես գալու համար. 5) օրենքով, այլ իրավական ակտերով և հիմնադրի սահմանած կարգով տնօրինում է պրոբացիայի ծառայությանն ամրացված գույքը. 6) պրոբացիայի ծառայության անունից ներկայացնում է հաշվետվություններ. 7) ներկայացնում է պրոբացիայի ծառայությունն այլ մարմինների, կազմակերպությունների և	

		քաղաքացիների հետ հարաբերություններում. 8) իր իրավասության շրջանակներում քննում է պրոբացիայի ծառայողների որոշումների, գործողությունների կամ անգործության դեմ բերված բողոքները, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իր լիազորությունների սահմաններում կասեցնում, վերացնում, անվավեր, չեղյալ կամ ուժը կորցրած է ճանաչում պրոբացիայի ծառայության պաշտոնատար անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող հրամանները, որոշումներն ու ցուցումները. 9) միջնորդություն է ներկայացնում պրոբացիայի ծառայությունում քաղաքացիական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ. 10) առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝	

		պրոբացիայի ծառայությանն առնչվող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ. 11) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ: 3. Պրոբացիայի ծառայության ղեկավարը պատասխանատվություն է կրում պրոբացիայի ծառայության խնդիրների իրականացման համար: **Հոդված 56. Պրոբացիայի ծառայության տարածքային մարմնի ղեկավարը** 1. Պրոբացիայի ծառայության տարածքային մարմնի (այսուհետ՝ տարածքային մարմին) ղեկավարումն իրականացնում է տարածքային մարմնի ղեկավարը: Տարածքային մարմնի ղեկավարը՝ 1) ապահովում է տարածքային մարմնի բնականոն գործունեությունը. 2) իր իրավասության շրջանակներում ապահովում է սույն օրենքի, Հայաստանի Հանրապետության այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի	

		հրամանների և ցուցումների կատարումը. 3) իր իրավասության շրջանակներում ընդունում է որոշումներ, տալիս է ցուցումներ. 4) իր իրավասության շրջանակներում քննում է պրոբացիայի ծառայողների նկատմամբ բերված բողոքները, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իր լիազորությունների սահմաններում կասեցնում, վերացնում, անվավեր, չեղյալ կամ ուժը կորցրած է ճանաչում մարմնի պաշտոնատար անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող որոշումներն ու ցուցումները. 5) իրեն վերապահված լիազորությունների սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս տարածքային մարմնի անունից, ներկայացնում նրա շահերը. 6) տարածքային մարմնի առանձին գործառույթներն իրականացնելու համար տալիս է լիազորագրեր. 7) միջնորդություն է	

		ներկայացնում պրոբացիայի ծառայության ղեկավարին՝ տարածքային մարմնի ծառայողներին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ. 8) առաջարկություններ է ներկայացնում պրոբացիայի ծառայության ղեկավարին՝ պրոբացիայի ծառայությանն առնչվող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ. 9) տարածքային մարմնի անունից ներկայացնում է հաշվետվություններ. 10) ներկայացնում է տարածքային մարմինն այլ մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում. 11) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ: **Հոդված 57. Պրոբացիայի ծառայության կամավորը** 1. Կամավորները պրոբացիայի ծառայության առջև դրված խնդիրների լուծման նպատակով անվճար հիմունքներով մասնակցում են վերջինիս գործառույթների	

		իրականացմանը՝ որպես օժանդակողներ: 2. Կամավորները ներգրավվում են պրոբացիայի ծառայության հետ կնքված պայմանագրի հիման վրա: 3. Պրոբացիայի ծառայության հետ կնքված պայմանագրում նշվում են կամավորի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը: Պայմանագրի օրինակելի ձևը և պայմանները հաստատում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը: 4. Իրենց գործունեության ընթացքում կամավորները պարտավոր են պահպանել իրենց հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը և չփոխանցել այն երրորդ անձանց: 5. Կամավորներին ներկայացվող չափանիշները և նրանց ներգրավման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: **Հոդված 58. Կամավորի իրավունքները** 1. Կամավորն իրավունք ունի՝ 1) ծանոթանալ իր իրավունքները	

		և պարտականությունները սահմանող իրավական ակտերին. 2) ստանալ իր պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր. 3) անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմանների ապահովվածության. 4) պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին վերապատրաստվելու: 2. Կամավորը կարող է ունենալ սույն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված այլ իրավունքներ: **Հոդված 59. Կամավորի պարտականությունները** 1. Կամավորը պարտավոր է՝ 1) կատարել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները. 2) կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ	

		իրեն վերապահված պարտականությունները ճշգրիտ ու ժամանակին. 3) կատարել պրոբացիայի ծառայության մարմինների և պաշտոնատար անձանց՝ իրենց լիազորությունների շրջանակներում ընդունված հրամաններն ու որոշումները, տրված կարգադրություններն ու ցուցումները. 4) պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելիս պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները. 5) ապահովել պայմանագրով իր ստանձնած պարտականությունների կատարումը: 2. Կամավորը պարտավոր է իրեն վերապահված իրավունքներն իրացնել օրենքին համապատասխան և իր գործունեության ընթացքում թույլ չտալ քաղաքացիների ու կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի որևէ խախտում: 3. Կամավորի համար օրենքով և պայմանագրով կարող են սահմանվել	

		նաև այլ պարտականություններ:»:	
	63. Նախագիծ	63. Նախագծի 14-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ համարակալելով որպես 16-րդ գլուխ՝ «(…) **Հոդված 60. Օրենքի ուժի մեջ մտնելը** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: 2. Սույն օրենքի 23-րդ հոդվածը, ինչպես նաև 3-րդ, 5-րդ և 8-րդ գլուխների դրույթներնուժի մեջ են մտնում 2018 թվականի հունվարի 1-ից: 3. Սույն օրենքի 11-րդ գլխի դրույթներն ուժի մեջ են մտնում 2017 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ այլընտրանքային խափանման միջոցների և անվտանգության միջոցների հետ համակցված կիրառվող էլեկտրոնային հսկողության դրույթների, որոնք ուժի մեջ են մտնում 2018 թվականի հունվարի 1-ից: **Հոդված 61. Պրոբացիայի ծառայության**	63. Ընդունվել է. Նախագծի նշյալ գլուխը շարադրվել է առաջարկվող խմբագրությամբ:

		ստեղծումը, կանոնադրության, կառուցվածքի, հաստիքների քանակի և պրոբացիայի ծառայությունում քաղաքացիական ծառայողների պաշտոնների անվանացանկի հաստատումը 1. Պրոբացիայի ծառայությունը ենթակա է ստեղծման, կանոնադրությունը, կառուցվածքը, հաստիքների քանակը և անվանացանկը՝ հաստատման սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում: 2. Պրոբացիայի ծառայության ստեղծման պահից դադարում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի գործունեությունը: **Հոդված 62. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի աշխատողներին պրոբացիայի ծառայողներ համարելը**	

		1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնում աշխատող պետական ծառայողները համարվում պրոբացիայի ծառայողներ, ընդ որում՝ պրոբացիայի ծառայության ղեկավարի, պրոբացիայի ծառայության ղեկավարի տեղակալների, պրոբացիայի ծառայության տարածքային մարմինների ղեկավարների և պրոբացիայի ծառայության բաժինների պետերի պաշտոնները զբաղեցվում են «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ մրցութային կարգով: **Հոդված 63. Պրոբացիայի ծառայության աշխատողների փորձաշրջանի առանձնահատկությունները** 1. Պրոբացիայի ծառայության պաշտոնն առաջին անգամ զբաղեցնող անձի նշանակումն իրականացվում է մինչև վեց ամիս	

		փորձաշրջանով: Փորձաշրջանի ընթացքում պրոբացիայի ծառայողը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կազմում գործող մասնագիտացված ուսումնական հաստատությունում անցնում է ուսումնառության ծրագիր, հանձնում է որակավորման քննություն և ստանում է որակավորման վկայական: Որակավորման քննությունը չհանձնած և որակավորման վկայական չստացած անձը համարվում է օրենքով սահմանված փորձաշրջանը չանցած: 2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո սույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անձինք պրոբացիայի ծառայությունում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնում են առանց սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ուսումնառության ծրագիրը անցնելու՝ մինչև 2017 թվականի հունվարի մեկը՝ «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ատեստավորում (թեստավորման և հարցազրույցի եղանակներով) անցնելու պայմանով՝ մինչև 2017 թվականի հունվարի մեկը	

		գործող կարգին համապատասխան: **Հոդված 64. Պրոբացիայի ծառայության դասային աստիճան շնորհելը** 1. Սույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց նախկինում շնորհված կոչումները պահպանվում են և պրոբացիայի ծառայությունում քաղաքացիական ծառայության պաշտոնում նշանակվելու հետ միաժամանակ շնորհվում է իրենց ունեցած կոչմանը համապատասխան դասային աստիճան: 2. Պրոբացիայի ծառայությունում քաղաքացիական ծառայության պաշտոնում նշանակվելիս, եթե անձն ունի ավելի բարձր դասային աստիճան (կոչում), վերջինիս շնորհվում է այդ դասային աստիճանին (կոչումին) համապատասխան քաղաքացիական ծառայության դասային աստիճան: **Հոդված 65. Ծառայության ստաժը հաշվարկելը** 1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության	

		այլընտրանքային պատիժների կատարման բաժնի ծառայողներին պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանումներում նշանակելիս նրանց ունեցած ստաժը հաշվարկվում է քաղաքացիական ծառայության ստաժի մեջ: **Հոդված 66. Անձնական գործերը փոխանցելը** 1. Պրոբացիայի ծառայող նշանակվելու պահից Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի նախկին ծառայողները շարունակում են վարել պրոբացիայի շահառուների անձնական գործերը, եթե պրոբացիայի ծառայությունում իրենց զբաղեցրած պաշտոնում այդպիսի լիազորություն իրենց վերապահված է: Հակառակ դեպքում պրոբացիայի ծառայությունում նշանակվելու պահից նրանք պրոբացիայի շահառուի անձնական գործերը հանձնում են ըստ ենթակայության:	

		Հոդված 67. Պրոբացիայի ծառայողների վարձատրությունը 1. Սույն օրենքի 62-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնում աշխատող պետական ծառայողին պրոբացիայի ծառայող համարելիս պահպանվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նրա հիմնական աշխատավարձի գործող չափը, եթե այն ավելի բարձր է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով որպես քաղաքացիական ծառայող նրա համար որոշվող հիմնական աշխատավարձի չափից: 2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթը չի գործում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո քաղաքացիական ծառայողի պաշտոնի փոփոխության դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ պետական	

		պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի փոփոխության արդյունքում բարձրանում է նրա հիմնական աշխատավարձի չափը: **Հոդված 68. Պրոբացիայի ծառայողի սոցիալական ապահովությունը** 1. Պրոբացիայի ծառայողի սոցիալական, այդ թվում՝ կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: 2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի պետական ծառայողը պրոբացիայի ծառայողի պաշտոնում նշանակվելու (քաղաքացիական ծառայող համարվելու) օրվանից հետո՝ երեք տարվա ընթացքում, օգտվում է «Պետական կենսաթոշակների մասին»	

		Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքից: Այս դեպքում պրոբացիայի ծառայությունում պաշտոն զբաղեցրած ժամանակահատվածը համարվում է զինվորական ծառայության ստաժ:»:	
	64. **«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի** (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդված	64. Նշյալ հոդվածը հանել նախագծից:	64. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	65. Նախագծի 2-րդ հոդված	65. 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «2) «հանգամանքը» բառից հետո լրացնել «, ինչպես նաև կարող է հաշվի առնել պրոբացիայի պետական ծառայության կողմից դատարանի կամ անկախ հանձնաժողովի պահանջի հիման վրա ներկայացված՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ խորհրդատվական զեկույցը:» բառերը:»:	65. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն (համարակալվել է որպես 1-ին հոդված):
	66. Նախագծի 3-րդ հոդված	66. Հոդվածով լրացվող	66. Ընդունվել է. Նախագծում կատարվել է

		նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև պրոբացիայի պետական ծառայության կողմից դատարանի կամ անկախ հանձնաժողովի պահանջի հիման վրա ներկայացված՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ խորհրդատվական զեկույցը:»:	համապատասխան փոփոխություն (համարակալվել է որպես 2-րդ հոդված):
	67. Նախագծի 4-րդ հոդված	67. Հոդվածով լրացվող նախադասությունը շարարդրել հետևյալ խմբագրությամբ՝ «Դատվածությունը հանելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև պրոբացիայի պետական ծառայության կողմից դատարանի պահանջի հիման վրա ներկայացված՝ դատվածությունը հանելու վերաբերյալ խորհրդատվական զեկույցը:»:	67. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն (համարակալվել է որպես 3-րդ հոդված):
	68. Նախագծի 5-րդ հոդված	68. Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետ նախատեսել 2018 թվականի հունվարի մեկը:	68. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	69. **«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում**	69. Նախագիծը լրամշակել՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի կարգավորումները, և	69. Ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան լրացումներ և փոփոխություններ:

	փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ)	համապատասխան փոփոխություններ և լրացումներ նախատեսել Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում՝ առանց հոդվածները ուժը կորցրած ճանաչելու: Միևնույն ժամանակ, նախագիծը լրամշակելիս հաշվի առնել աշխատանքային քննարկման արդյունքները:	
	70. **«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի** (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդված	70. Հոդվածով լրացվող 206.10_րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «**Հոդված 206[10]. Պրոբացիայի ծառայության հարցմանը չպատասխանելը կամ պահանջվող նյութերը չտրամադրելը** 1. Պրոբացիայի ծառայության հարցումներին սահմանված ժամկետներում չպատասխանելը կամ սահմանված ժամկետներում պահանջվող նյութերը չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը՝ վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ մեկ	70. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Խնդրո առարկա հոդվածի 2-րդ մասին համապատասխան փոփոխություններ կատարել նաև Նախագծի մյուս հոդվածներում:

		տարվա ընթացքում կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:»:	
	71. Նախագծի 2-րդ հոդված	71. Հոդվածի վերնագրում «ժամկետում» բառից հետո լրացնել «անհարգելի պատճառով» բառերը, իսկ 2-րդ մասը հանել:	71. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան լրացում և փոփոխություն:
	72. Նախագիծ	72. Լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր 4-րդ հոդված՝ **«Հոդված 4.** Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 206[13]-րդ հոդվածով. «**Հոդված 206[13]. Պրոբացիայի շահառուի կողմից պրոբացիայի ծառայողի որոշման հիման վրա իր օրգանիզմում ոգելից խմիչքների (ալկոհոլի), թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն), թունավոր կամ այլ թմրեցնող նյութերի առկայության վերաբերյալ հետազոտություն անցնելուց խուսափելը կամ հրաժարվելը՝** 1. Պրոբացիայի շահառուի կողմից պրոբացիայի ծառայողի որոշման հիման վրա իր օրգանիզմում ոգելից խմիչքների (ալկոհոլի),	72. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան լրացում՝ վերահամարակալելով մյուս հոդվածները:

		թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն), թունավոր կամ այլ թմրեցնող նյութերի առկայության վերաբերյալ հետազոտություն անցնելուց խուսափելը կամ հրաժարվելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը՝ վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:»:	
	73. Նախագիծ	73. Նախածի 4-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածները շարարդրել հետևյալ խմբագրությամբ՝ **«Հոդված 4.** Օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «206[8]» թվից հետո լրացնել «206[10], 206[11], 206[12], 206[13]» թվերը: **Հոդված 5.** Օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ	73. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան լրացումներ (նշյալ հոդվածները համարակալվել են որպես 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածներ):

		բովանդակությամբ 12-րդ կետով. «12) սույն օրենսգրքի 206[10], 206[11], 206[12] և 206[13] հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ պրոբացիայի պետական ծառայությունը:»: **Հոդված 6.** Սույն օրենքը ուժի մեջ է մտնում Պրոբացիայի պետական ծառայության ստեղծման պահից:»:	
	74. **«Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի** 2-րդ հոդված	74. Որպես օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետ նախատեսել Պրոբացիայի պետական ծառայության ստեղծման պահը:	74. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	75. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդված	75. Նշյալ հոդվածը հանել նախագծից՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Պրոբացիայի պետական ծառայությունը պետական ծառայության հատուկ տեսակ չի դիտարկվելու:	75. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	76. Նախագծի 3-րդ հոդված	76. Նախատեսել, որ սույն օրենքն ուժի մեջ է մտնում Պրոբացիայի պետական ծառայության ստեղծման պահից:	76. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն (համարակալվել է որպես 2-րդ հոդված):
ՀՀ ԱԺ պատգամավոր Էդմոն Մարուքյան	77. Նախագիծ	77. Առաջարկում եմ Նախագծով առանձին գլուխ սահմանել պրոբացիայի	77. Ընդունվել է մասնակի. Բարձրացված հարցի առնչությամբ հարկ եմ համարում նշել, որ

		շրջանակներում կիրառվող անվտանգության միջոցների վերաբերյալ, մասնավորապես թվարկելով այդ միջոցների տեսակները՝ ամենամեղմից մինչև ամենախիստը, հատուկ միջոցները (օրինակ՝ անչափահասների նկատմամբ կիրառվող միջոցները), դրանց կիրառման պայմանները:	անվտանգության միջոցների տեսակների, ինչպես նաև դրանց՝ ամենամեղմից մինչև ամենախիստը դասակարգումը սույն օրենքի նախագծի կարգավորման առարկայի մեջ չի մտնում: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության քրեականի օրենսգրքի նախագիծը ևս որևէ դասակարգում չի նախատեսում: Միաժամանակ հարկ եմ համարում նշել, որ Նախագծի 5-րդ գլխով մանրամասն կարգավորվել են անվտանգության միջոցների կատարման ապահովմանն առնչվող իրավահարաբերությունները:
	78. Նախագիծ	78. Առաջարկում եմ Նախագծերի փաթեթը խմբագրել այնպես, որ պրոբացիայի ծառայողները լինեն ոչ թե զինվորական, այլ քաղաքացիական ծառայողներ, քանի որ պրոբացիոն ծառայության աշխատակցի պաշտոնը, ըստ իս, չի ենթադրում զինվորական կամ դրան հավասարեցված պաշտոն:	78. Ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Արդյունում նախագծերի փաթեթից հանվել են **«Պրոբացիայի պետական ծառայության մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»**

			Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը, իսկ «Պրոբացիայի պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի որոշ առանձնահատկություններ կարգավորվել են «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով՝ առանձին գլխով:
	79. Նախագծի 16-րդ հոդվածի 4-րդ մաս	79. Նշյալ մասի 2-րդ նախադասությունում «փոխելու» բառը փոխարինել «խստացնելու» բառով:	79. Առաջարկն ընդունելի է: Միաժամանակ հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախագիծն անվտանգության միջոցների որևէ դասակարգում չի նախատեսել, մասնավորապես՝ առավել մեղմից մինչև առավել խիստը, որպիսի պայմաններում նախագծում անվտանգության միջոցի տեսակին առավել մեղմ կամ առավել խիստ որակում տալու առնչությամբ որևէ առանձնահատկություն չի նախատեսվել: Հաշվի առնելով այդ հանգամանքը, նախագծում նախատեսվել է «փոխելու» եզրույթը, քանի որ այս փուլում հնարավոր չէ «խստացնելու» եզրույթն ամրագրել: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծի 5-րդ գլուխն ուժի մեջ է մտնելու 2018 թվականի հունվարի 1-ից՝ մինչ այդ խնդրո առարկա հարցին անդրադարձ կկատարվի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախագծի քննարկման

			ընթացքում:
	80. Նախագծի 16-րդ հոդվածի 11-րդ մաս	80. 11-րդ մասով նախատեսվող՝ դատարանի կողմից էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման կամ չկիրառման այլընտրանքային լիազորության վերաբերյալ առաջարկում եմ նույն օրենքով նախատեսել տվյալ հսկողության միջոցի կիրառման պայման(ներ)ը՝ նվազագույնի հասցնելով դատարանի հայեցողությունը (նույնը՝ Նախագծի 24-րդ հոդվածի 11-րդ մասի վերաբերյալ): Այստեղ հատկապես առաջարկում եմ հղի կանանց և կերակրող մայրերի մասով նախատեսել նաև հատուկ դրույթ առ այն, որ նրանց նկատմամբ էլեկտրոնային հսկողության միջոցներ չեն կիրառվում կամ կիրառվում են հատուկ հիմնավորմամբ (կախված արարքի վտանգավորության աստիճանից և/կամ այլ):	80. Առաջարկն ընդունելի է: այդուհանդերձ հայտնում եմ, որ էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման պայմանների նախատեսումը սույն օրենքի նախագծի կարգավորման առարկայի մեջ չի մտնում և պետք է կարգավորվի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագծի շրջանակներում: Միաժամանակ հարկ է նշել, որ խնդրո առարկա հարցին անդրադարձ կկատարվի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագծի քննարկման ընթացքում:
	81. Նախագիծ	81. Առաջարկում եմ Նախագծի 19-րդ հոդվածի 4-րդ մասից, 20-րդ հոդվածի 4-րդ մասից, 21-րդ հոդվածի 1-ին մասից, 22-րդ հոդվածի 1-ին մասից հանել «կամ երկարաձգելու» բառերը, քանի որ եթե անձը մինչև վերջ անցել է իր նկատմամբ նշանակված պրոբացիան, ապա ըստ էության դրա	81. Առաջարկն ընդունելի է: Այդուհանդերձ Նախագծում նման կարգավորումների նախատեսումը բխում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախագծի կարգավորումներից: Միաժամանակ հարկ եմ համարում հայտնել, որ սույն առաջարկում ներառված երկրորդ առաջարկի առնչությամբ տեղի են ունեցել աշխատանքային

		ժամկետի երկարաձգումը հիմնավորված չէ: Միևնույն ժամանակ, առաջարկում եմ Նախագծով ամրագրել, որ պրոբացիայի ժամկետի երկարացման միջնորդություն ներկայացվում է օրենքով ուղղակիորեն ամրագրված հիմքերի առկայության դեպքում:	քննարկումներ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախագիծը մշակող աշխատանքային խմբի հետ: Քննարկման արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ կոնկրետ հիմքերի նախատեսումը կարող է հանգեցնել գործնականում հնարավոր խնդիրների առաջացմանը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ նախագծում նման կարգավորումներ են տրվել: Միաժամանակ հարկ եմ համարում հայտնել, որ նախագծի 5-րդ գլուխն ուժի մեջ է մտնելու 2018 թվականի հունվարի 1-ից:
	82. Նախագիծ	82. Առաջարկում եմ Նախագծի 20-րդ հոդվածով ամրագրել նաև այցելությունների առավելագույն պարբերականություն, որպեսզի պրոբացիայի ծառայողը չչարաշահի պրոբացիայի ծառայության շահառուի բնակության վայր այցելելու իր լիազորությունը՝ օրինակ որևէ անձնական բնույթի պատճառներից ելնելով:	82. Ընդունվել է. Նախագծում սահմանվել է այցելությունների առավելագույն պարբերականություն:
	83. Նախագիծ	83. Առաջարկում եմ Նախագծից հանել կրթական, մշակութային, մարզական կամ այլ միջոցառումներին ներգրավումը՝ որպես պրոբացիայի տեսակ կամ լրացուցիչ պարտականություն (16-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ, 10-րդ մասեր, 16-րդ հոդվածի	83. Ընդունվել է ի գիտություն. Բարձրացված հարցի առնչությամբ հարկ եմ համարում հայտնել հետևյալը. Ընդհանուր առմամբ պրոբացիան ուղղված է պրոբացիայի շահառուի սոցիալական վերաինտեգրմանը, վերասոցիալականացմանը՝ վերջինիս նկատմամբ հսկողություն, ուղղորդում

		14-րդ մաս, 22-րդ հոդված, 23-րդ հոդվածի 7-րդ մասի 11-րդ կետ, 28-րդ հոդվածի 1-ին մաս): Այս կարգավորումը՝ ***1)*** մի կողմից անորոշ է և ունի մանրամասնվելու կարիք (օրինակ՝ ով և ինչպես է ընտրելու իր համար ընդունելի կրթական, մշակութային, մարզական կամ այլ միջոցառումները և դրանք իրականացնող մարմինները կամ կազմակերպությունները, արդյոք հաշվի են առնվելու շահառուի գերադասությունները և այլն), ***2)*** մյուս կողմից այն ֆինանսական լրացուցիչ բեռ է նախատեսում պետության համար (իսկ եթե նախատեսվում է, որ շահառուն է դրա համար վճարելու, ապա դա առավել ևս անընդունելի է), ***3)*** ի վերջո, այդ միջոցառումներին մասնակցությունը, ըստ իս, որևէ կերպ չի նպաստում պրոբացիայի նպատակների իրագործմանը:	և աջակցություն իրականացնելու միջոցով: Այս պայմաններում կրթական, մշակութային, մարզական կամ այլ միջոցառումներին ներգրավումը նպատակ է հետապնդում հասնել պրոբացիայի շահառուի վերաինտեգրմանը, քանի որ հետագայում այսպիսի միջոցառումները կարող են բարձրացնել պրոբացիայի շահառուի զբաղվածության ապահովման հնարավորությունը: Միաժամանակ անհրաժեշտ եմ համարում հայտնել, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախագիծը, որպես անվտանգության միջոցի տեսակ, նախատեսել է կրթական, մշակութային, մարզական կամ այլ միջոցառումներին ներգրավումը, որի էությունը հենց կայանում է այդպիսի միջոցառումներին մասնակցելու պարտականությունը:
	84. Նախագծի 23-րդ հոդված	84. Առաջարկում եմ 23-րդ հոդվածի (խորհրդատվական զեկույցների	84. Ընդունվել է մասնակի. Բարձրացված հարցի շուրջ հայտնում եմ հետևյալը.

		վերաբերյալ) 6-րդ մասը հանել Նախագծից, քանի որ պարզ չէ, թե անձի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն ինչ նպատակով են զետեղվելու խնդրո առարկա զեկույցում: Եթե այնուամենայնիվ նշված կարգավորումն անհրաժեշտ է որոշակի նպատակ(ներ)ով, ապա առաջարկում եմ, որպեսզի այդ տեղեկությունները տրամադրվեն ոչ թե անձի սեփական նախաձեռնությամբ (ինչը կարող է ֆորմալ առումով համապատասխանել իրականությանը, սակայն իրականում անձը դա անի սեփական կամքին հակառակ), այլ Նախագծով ամրագրել, որ անձի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն ստանալու նպատակով Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասում նշված մարմինը միջնորդությամբ և հիմնավորումներով դիմում է դատարան, որն էլ որոշում է բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման անհրաժեշտություն կա, թե ոչ և ըստ այդմ ամբողջությամբ կամ մասով բավարարում կամ մերժում միջնորդությունը:	Նախագծերի փաթեթի սկզբնական տարբերակում նախատեսվել է պրոբացիայի ծառայողի լիազորությունը բանկային գաղտնիք կազմող տեղեկության ստացման առնչությամբ: Սակայն, հաշվի առնելով խնդրո առարկա կարգավորման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դիրքորոշումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բանկային քաղաքականության առանձնահատկությունները, նախագծից պրոբացիայի ծառայողի այդ լիազորությունը հանվել է: Նման պայմաններում նախագծում առաջարկում է պրոբացիայի շահառուի կամահայտնությամբ իր վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրման հնարավորությունը: Բացի այդ, պրոբացիայի շահառուի կողմից իր վերաբերյալ այդպիսի տեղեկությունների տրամադրումը կարևոր է նրա գույքային դրությունը պարզելու համար:

	85. Նախագծի 27-րդ հոդվածի 1-ին մաս	85. Առաջարկում եմ Նախագծի 27-րդ հոդվածի 1-ին մասում սահմանել հստակ ժամկետ (օրինակ՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում), երբ հղի կանանց, մինչև 3 տարեկան երեխա ունեցող, հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժի կրումից ազատելու կամ պատժի կրումը հետաձգելու մասին դատական ակտը ստանալուց հետո պրոբացիայի ծառայությունը պրոբացիայի ծառայության շահառուի հաշվառման վերցնելու մասին տեղեկացնում է նրա բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմիններին՝ երեխայի դաստիարակության և խնամքի նկատմամբ հսկողության ապահովման նպատակով:	85. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
	86. Նախագծի 27-րդ հոդվածի 3-րդ մաս	86. Նույն հոդվածի 3-րդ մասում առաջարկում եմ հստակեցնել, թե ինչպես է ֆիքսվում պրոբացիայի ծառայության շահառուի կողմից երեխայի դաստիարակությունից և խնամքից խուսափելու փաստը, քանի որ առաջարկվող խմբագրությամբ հնարավոր է, որ պրոբացիայի ծառայության աշխատողի	86. Ընդունվել է մասնակի. Նախագծի նշյալ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, թե ով է համարվում «երեխայի դաստիարակությունից և խնամքից խուսափող». «***Պրոբացիայի շահառուն երեխայի դաստիարակությունից և խնամքից խուսափող է համարվում***, եթե, պաշտոնապես չհրաժարվելով երեխայից, նրան թողնում է ծննդատանը կամ հանձնում է մանկատուն կամ հակաբարոյական

		հայտարարությունը նման հանգամանքների մասին բավարար հիմք հանդիսանա պատժի կրման հետաձգումը վերացնելու մասին, ինչը սակայն, կարող է չհամապատասխանել իրականությանը:	ապրելակերպ է վարում և չի զբաղվում երեխայի դաստիարակությամբ ու խնամքով կամ մեկ ամսից ավելի ժամկետով երեխային թողնում է ազգականների կամ այլ անձանց մոտ և անձամբ չի զբաղվում նրա դաստիարակությամբ կամ կատարում է այլ գործողություններ, որոնք վկայում են երեխային դաստիարակելուց խուսափելու մասին:»: Ի վերջո, դատարանն է որոշում նման միջնորդության բավարարման և մերժման հարցը:
	87. Նախագծի 29-րդ հոդվածի 2-րդ մաս	87. Առաջարկում եմ Նախագծի 29-րդ հոդվածի 2-րդ մասի (2) կետը «համաձայնությամբ» բառից առաջ լրացնել «գրավոր» բառով, ինչը բխում է բոլոր կողմերի շահերից:	87. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
	88. Նախագծի 29-րդ հոդվածի 3-րդ մաս	88. Նույն հոդվածի 3-րդ մասով առանձին պարբերությամբ առաջարկում եմ հստակեցնել, թե ինչ կարգով է պրոբացիայի ծառայողն ապահովում պրոբացիայի ծառայության շահառուի պրոբացիայի ծառայություն ներկայանալը:	88. Ընդունվել է ի գիտություն. Պրոբացիայի ծառայողի կողմից պրոբացիայի ծառայության շահառուի պրոբացիայի ծառայություն ներկայանալն ապահովելու գործընթացն, ըստ էության, իրենից ներկայացնում է կազմակերպական (տեխնիկական) միջոցառումների ամբողջություն: Ուստի, նշյալ գործընթացին առնչվող կարգավորումները կնախատեսվեն Պրոբացիայի պետական ծառայության ներքին կանոնակարգով:
	89. Նախագծի 31-րդ հոդվածի 2-րդ մաս	89. Առաջարկում եմ Նախագծի 31-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «, իսկ նրա	89. Ընդունվել է ի գիտություն. Ծանուցման նման կարգավորումները ամրագրվել է Հայաստանի

		ժամանակավոր բացակայության դեպքում նրա հետ բնակվող ընտանիքի չափահաս անդամներից մեկին» բառերը, քանի որ պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ ընտանիքի անդամների միջոցով փոխանցվող փաստաթղթերն ուղղակի չեն հասնում հասցեատերերին՝ ինչպես դրանց կարևորության թերագնահատման, այնպես էլ չարամտորեն թաքցնելու և այլ պատճառներով:	Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագծի կարգավորումների օրինակով: Բացի այդ, հարկ է նկատել, որ այն դեպքում, երբ ծանուցագիրը հանձնվում է պրոբացիայի շահառուի հետ բնակվող ընտանիքի չափահաս անդամներից մեկին, ապա ծանուցագրում նախատեսված է այդ անձի պարտականությունը՝ծանուցագիրը պրոբացիայի շահառուին հանձնելու վերաբերյալ:
	90. Նախագծի 31-րդ հոդվածի 5-րդ մաս	90. 5-րդ մասում «պաշտոնական» բառն առաջարկում եմ փոխարինել «տրամադրած» բառով:	90. Վկայակոչված մասն արդեն իսկ ներառում է բացի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից պրոբացիայի շահառուի կողմից նաև այլ էլեկտրոնային փոստի հասցեի տրամադրումը: Հարկ է նաև ընդգծել, որ էլեկտրոնային փոստի այս երկու տեսակները չեն նույնանում:
	91. Նախագծի 32-րդ հոդված	91. Առաջարկում եմ 32-րդ հոդվածի վերնագրից («Ծանուցման պատշաճությունը և դրա հետևանքները») հանել «դրա» բառը, քանի որ հետևանքները վերաբերում են ծանուցմանը, իսկ «դրա»-ի առկայությամբ ստացվում է, որ հետևանքները վերաբերում են ծանուցման պատշաճությանը:	91. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան շտկում:

	92. Նախագծի 34-րդ հոդվածի 1-ին մաս	92. «տվյալների» բառից առաջ լրացնել «միասնական» բառը:	92. Չի ընդունվել. Նախագծի 3-րդ հոդվածում տրվել է «տվյալների շտեմարան» հասկացության մեկնաբանությունը, այն է՝ « **տվյալների շտեմարան՝** պրոբացիայի շահառուների անձնական գործերի և պրոբացիայի ծառայության գործունեության վերաբերյալ էլեկտրոնային և թղթային տեղեկությունների ամբողջություն.»: Հետևանար,անհրաժեշտ է պահպանել հասկացությունների կիրառման միասնականությունը:
	93. Նախագծի 37-րդ հոդված	93. «վարքագիծը» տերմինի օգտագործումը պարզ չէ, առաջարկում եմ քննարկել նույն տեղում «գործողությունները» բառի օգտագործման նպատակահարմարությունը:	93. Ընդունվել է ի գիտություն. կարծում եմ՝ «վարքագիծը» եզրույթի գործածումը առավել նպատակահարմար է:
	94. Նախագծի 38-րդ հոդված	94. Առաջարկում եմ վերանայել Նախագծի 38-րդ հոդվածը՝ բացառելով պրոբացիայի ծառայության շահառուի կողմից էլեկտրոնային հսկողության ծառայության ֆինանսավորումը, քանի որ պրոբացիան պետական ծառայություն է, որի դիմաց քաղաքացիները վճարում են հարկ: Ավելին, պրոբացիան ուղղված է բյուջեի միջոցների կտրուկ տնտեսմանը՝ քրեակատարողական հիմնարկներում	94. Ընդունվել է ի գիտություն. հարկ եմ համարում հայտնել, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ անդամ պետությունների ուղղված էլեկտրոնային մոնիթորինգին վերաբերող հանձնարարականը թույլ է տալիս պրոբացիայի շահառուի վրա դնել էլեկտրոնային հսկողության կիրառման արդյունքում գոյացող ծախսերի հատուցման պարտականությունը: Հիմք ընդունելով այդ հանգամանքը՝ նախագծում առաջարկվել է էլեկտրոնային հսկողության կիրառման

		ազատազրկված անձանց համար կատարվող պետական ծախսերի մեծապես կրճատման հաշվին: Այսպիսով՝ առաջարկում եմ, որպեսզի պրոբացիայի ծառայության բոլոր ծախսերը, այդ թվում նաև էլեկտրոնային հսկողության ծառայությունների ֆինանսավորումը կրի պետությունը:	ծախսերի հատուցումը կատարել ինչպես պրոբացիայի շահառուի դրամական միջոցների, այնպես էլ պետական բյուջեի միջոցների հաշվին: Միաժամանակ հարկ է նշել, որ նախագծի 11-րդ գլուխն ուժի մեջ է մտնելու 2018 թվականի հունվարի 1-ից, ուստի, անհրաժեշտության դեպքում առկա կարգավորումները մինչ այդ կփոփոխվեն:
	95. Նախագծի 39-րդ 1-ին մաս	95. 1-ին մասի (6) կետում նշվում է, որ պրոբացիայի ծառայության շահառուն պետական նպատակային ծրագրերի շրջանակներում առողջության պահպանման իրավունք ունի: Տվյալ դեպքում պարզ չէ, թե ինչ հիմնավորմամբ է առաջարկվում պրոբացիայի ծառայության շահառուին նման արտոնություն տալը, ըստ այդմ՝ առաջարկում եմ այդ կետը հանել Նախագծից:	95. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	96. Նախագծի 42-րդ հոդվածի 2-րդ մաս	96. (2) կետը «մահը» բառից հետո լրացնել «կամ ծանր հիվանդությունը» բառերով:	96. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
	97. Նախագծի 42-րդ հոդվածի 4-րդ մաս	97. Առաջարկում եմ նույն հոդվածի 4-րդ մասով նախատեսվող լիազորության համար սահմանել հստակ ժամկետ, օրինակ՝ դիմումի ստացման պահից 2	97. Առաջարկն ընդունելի է: Հարկ է ընդգծել, որ նշյալ դրույթն ամրագրում է, որ վարույթն իրականացնող մարմինը այլընտրանքային խափանման միջոցի կարգն ու պայմանները

		աշխատանքային օրվա ընթացքում:	չպահպանելու թույլատվություն տալու կամ մերժելու մասին որոշում է կայացնելու քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում: Հետևաբար, վարույթն իրականացնող մարմնի համար որևէ ժամկետային սահմանափակում նախատեսելը սույն օրենքի կարգավորման առարկայի մեջ չի մտնում: Միաժամանակ հարկ եմ համարում նշել, որ խնդրո առարկա դրույթների առնչությամբ կարգավորումների միասնականությունն ապահովելու ուղղությամբ աշխատանքային քննարկումներ են անցկացվում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը մշակած աշխատանքային խմբի հետ:
ՀՀ կառավարություն	**98. «Պրոբացիայի պետական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)** 5-րդ հոդվածի 11-րդ մաս	98. Սահմանել դրույթ պրոբացիայի ծառայողների համազգեստի կրման կարգի սահմանման վերաբերյալ:	98. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան լրացում (նշյալ հոդվածը նախատեսվել է «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի նախագծում՝ համարակալվելով որպես 52-րդ հոդված):
	99. Նախագծի 6-րդ հոդված 2-րդ մաս	99. «կրիմինոլոգիական» բառը փոխարինել «քրեաբանական» բառով:	99. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն (նշյալ հոդվածը նախատեսվել է «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի նախագծում՝ համարակալվելով որպես 53-րդ հոդված):
	100. Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մաս	100. 4-րդ կետում «և փոփոխում» բառերը հանել:	100. Ընդունվել է մասնակի. Նախագծից նշյալ դրույթը հանվել է:

	101. Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մաս	101. 12-րդ կետը հանել:	101. Ընդունվել է. Նախագծից նշյալ դրույթը հանվել է:
	102. Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մաս	102. 5-րդ կետից հանել գործարքներ կնքելու լիազորությունը:	102. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն (նշյալ հոդվածը նախատեսվել է «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի նախագծում՝ համարակալվելով որպես 56-րդ հոդված):
	103. Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մաս	103. 9-րդ կետը հանել:	103. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն (նշյալ հոդվածը նախատեսվել է «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի նախագծում՝ համարակալվելով որպես 56-րդ հոդված):
	104. Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մաս	104. 4-րդ կետում «նկատմամբ» բառը փոխարինել «գործողությունների դեմ» բառերով:	104. Չի ընդունվել. Միայն «գործողություններ» եզրույթի գործածումը կհանգեցնի նրան, որ ծառայողի անգործության դեմ բողոքներ գործնականում չեն կարողանա բերել:
	105. Նախագծի 58-րդ հոդված	105. Նախատեսել դրույթ Այլընտրանքային պատիժների կատարման բաժնի ծառայողների վերանշանակման վերաբերյալ:	105. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան լրացում (նշյալ հոդվածը նախատեսվել է «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի նախագծում՝ համարակալվելով որպես 62-րդ հոդված):
ՀՀ ԱԺ պատգամավոր Հովհաննես Սահակյան	106. **«Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)** 13-րդ հոդվածի 1-ին մաս	106. Նշյալ դրույթում բացակայում են տնային կալանքի կատարման առանձնահատկությունները սահմանող դրույթները: Առաջարկում ենք միասնականացնել կարգավորումները և նույն հոդվածում վարչական հսկողությանը վերաբերող դրույթների հետ մեկտեղ սահմանել տնային	106. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:

		կալանքին վերաբերող համապատասխան դրույթները:	
	107. Նախագիծ	107. Նախագծում օգտագործվում են մի շարք հասկացություններ, որոնք կարիք ունեն պարզաբանման, օրինակ, «կրթադաստիարակչական հիմնարկ», «դատական փուլ», «հետպատժյա»: Նպատակահարմար է դրանց բացատրությունները տալ նախագծի 3-րդ հոդվածում:	107. Ընդունվել է մասնակի. Անհրաժեշտ եմ համարում հայտնել, որ «կրթադաստիարակչական հիմնարկ» հասկացությունը նախագծում ամրագրվել է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախագծի կարգավորումները: Բացի այդ, նշյալ հասկացության մեկնաբանումը սույն օրենքի նախագծի կարգավորման առարկայի մեջ չի մտնում: Նախագծի ողջ տեքստում «դատական փուլ» եզրույթը փոխարինվել է «դատական քննության փուլ» եզրույթով: Ինչ վերաբերում է «հետպատժյա փուլ» հասկացության մեկնաբանմանը, ապա հարկ է նշել, որ նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11-րդ կետով՝ «**հետպատժյա փուլ՝** պատժի կրումից հետո մինչև դատվածության մարումը կամ օրենքով սահմանված կարգով դրա հանումը պրոբացիայի ծառայության կողմից իրականացվող գործառույթների իրականացման ժամանակահատվածը.»:
	108. Նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ մաս	108. Վիճահարույց է նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված Հայաստանի Հանրապետության	108. Բարձրացված հարցի առնչությամբ հարկ եմ համարում նշել, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

		կառավարության լիազորությունը պրոբացիայի ծառայության ներքին կանոնակարգը հաստատելու մասին:	14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով կարգավորման է ենթակա օրենքով չկարգավորված ցանկացած հարաբերություն, եթե այդ հարաբերությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքով կամ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով ու կարգադրությամբ չպետք է կարգավորվի իրավական այլ ակտերով: Ուստի, նախագծում նշյալ դրույթի նախատեսումը լիովին բխում է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կարգավորումից: Միաժամանակ հայտնում եմ, որ պրոբացիայի ծառայության ներքին կանոնակարգով կարգավորվելու են, ըստ էության, կազմակերպական (տեխնիկական) միջոցառումներ:
	109. Նախագծի 19-րդ հոդված	109. Անհրաժեշտ է վերանայել նախագծի 19-րդ հոդվածով նախատեսված ոգելից խմիչքներից (ալկոհոլից), թմրամիջոցներից, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութերից ունեցած կախվածությունից բուժման կուրս անցնելու պարտականության կատարման նկատմամբ հսկողության	109. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան լրացում, ըստ որի՝ պրոբացիայի ծառայողը պետք է կայացնի պատճառաբանված որոշում, ինչպես նաև «հետ առնչության մասին» բառերը փոխարինվել են «օգտագործման վերաբերյալ» բառերով: Նման պայմաններում այն հիմք կհանդիսանա նախագծի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված իրավունքի արդյունավետ

		մեխանիզմները, որպեսզի բացառվի պրոբացիոն ծառայողի կողմից հայեցողական գործողություններ կատարելու հնարավորությունը: Բացի այդ, անհրաժեշտ է նախատեսել դրույթ, համաձայն որի՝ պրոբացիայի շահառուի կողմից դատական ակտով սահմանված՝ ոգելից խմիչքներից (ալկոհոլից), թմրամիջոցներից, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութերից ունեցած կախվածությունից բուժման կուրս անցնելու պարտականության խախտման յուրաքանչյուր դեպքում համապատասխան բժշկական հաստատությունը պարտավոր է այդ մասին հայտնել պրոբացիայի ծառայողին:	իրացմանը, այն է՝ պրոբացիայի ծառայության գործողությունները կամ անգործությունը վերադասության կարգով կամ դատարան բողոքարկելը: Ինչ վերաբերում է երկրորդ առաջարկին, ապա հարկ եմ համարում հայտնել, որ Նախագծի 19-րդ, 20-րդ և 24-րդ հոդվածներում լրացվել են հետևյալ բովանդակությամբ նոր մասեր՝ «Պրոբացիայի շահառուի կողմից դատական ակտով սահմանված՝ ոգելից խմիչքներից (ալկոհոլից), թմրամիջոցներից, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութերից ունեցած կախվածությունից բուժման կուրս անցնելու պարտականության խախտման յուրաքանչյուր դեպքում համապատասխան բժշկական հաստատությունը պարտավոր է խախտումը հայտնաբերելու պահից անհապաղ, բայց ոչ ուշ քան երկու աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին հայտնել պրոբացիայի ծառայողին:»:
	110. Նախագծի 23-րդ հոդված	110. Անհրաժեշտ է 23-րդ հոդվածում սահմանված խորհրդատվական զեկույցի կազմման ընթացքում նախատեսել պրոբացիոն ծառայողի շահառուի հետ հանդիպման պարտականությունը:	110. Ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան լրացում (տե՛ս 23-րդ հոդվածի 3-րդ մասը):
	111. Նախագիծ	111. Անհրաժեշտ է հաշտարարության	111. Ընդունվել է. Նախագծում կատարվել է

		գործընթացը կանոնակարգել այնպես, որպեսզի կողմերին ծանուցմանը զուգահեռ, անձնական շփումների միջոցով բացատրվի հաշտարարության նպատակը, հետևանքները, առավելությունները և այլ անհրաժեշտ պայմանները:	համապատասխան փոփոխություն: Մասնավորապես՝ Նախագծի 30-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Ազատազրկման հետ չկապված պատիժների կատարման կամ հետպատժյա փուլում կողմի միջնորդության դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին անհապաղ, բայց ոչ ուշ քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ծանուցում է մյուս կողմին: Ծանուցմանը զուգահեռ պրոբացիայի ծառայողը կապ է հաստատում և հանդիպում հաշտարարություն նախաձեռնող կողմի հետ՝ ճշտելով նրա առաջարկները: Այնուհետև հանդիպում է մյուս կողմի հետ: Պրոբացիայի ծառայողը կողմերին բացատրում հաշտարարության էությունը, նպատակը, առավելությունները, հետևանքները և անհրաժեշտ այլ պայմանները: Երկու կողմերի հետ հանդիպումների արդյունքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն, որը հաստատվում է պրոբացիայի ծառայողի և կողմերի ստորագրությամբ: Մյուս կողմը պարտավոր է արձանագրությունը ստորագրելուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ քան երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր կամ բանավոր դիրքորոշում հայտնել հաշտարարության գործընթաց սկսելու

			վերաբերյալ:»:
	112. Նախագիծ 49-րդ հոդված	112. Անհրաժեշտ է նախագծի 49-րդ հոդվածում հանել «հնարավորության դեպքում» բառերը:	112. Ընդունվել է. Նախագծից նշված բառերը հանվել են: